




ԲՈԼՈՐ ԱՐՎԵՍՏՆԵՐԻ ՄԱՅՐԸ ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆ Է ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ

6-7(1211-1212) 2019
Հրատարակության
55-րդ տարի

ԱՍՏՂԱԲՈՒՅԼ



Հայրս երբեք չէր խոսում հարստության մասին՝ որպես իր կյանքի նպատակի: Երբեք: Նա կայլավներ, եթե լսեր, որ երագում եմ օդանավ գնելու կամ Կարիքյան կղզիներում ապրելու մասին: Մի անգամ նրան հարցրին, թե ինչ արժեքներ կուզի փոխանցել մեզ, պատասխանեց. «Ցանկանում եմ, որ նրանք չդառնան նյութական բարիքների գերի: Ցանկանում եմ, որ կարենորեն լավ գիրքը, լավ կերակուրը, վայելեն արձակուրդը: Դա հիմնալի է: Բայց դժբախտ լինել, ինչ է, թե զրկված ես նյութական վայելքներից...եւ սա համարում եմ ստրկության մի տեսակ...»:

Ջասթին ՏՐՅՈՒԴՈ
«Ընդհանուր հայտարար»

ՕՂ ԱԿԱՆՋՆԵՐԻՍ

Ոչ դարավերջիկ, մանք
դարասկզբիկ ժողովուրդ
ենք:

ԼԵՆՈՆ ՀԱՆԹ
1898 թ., Մյունխեն

ԱՎԱՐՏԱԿԱՆ, ԱՎԱՆԴԱԿԱՆ ՇՔԱՀԱՆԴԵՍ

ԱՌԻԿ-Ի ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ ՎՍՏԱՀԱԲԱՐ ԵՆ ՔԱՅԼՈՒՄ ԴԵՊԻ ԱՊԱԳԱ



Նրանք հավատում են, համոզված են, որ կարող են փոխել աշխարհը: Փոխել դեպի էլ ավելի լավը: Նրանք պատրաստել են ազատ թռիչքի, սլացքի, եւ մեկնարկի հանդիսավոր պահը հունիս 5-ին էր:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ագրոքիզնետի ուսուցման հայ-ամերիկյան կենտրոնը շքահանդեսով ճանապարհեց շրջանավարտների 19-րդ սերնդին: Ի տարբերություն նախորդ տարիների, հանդիսությունը ԱՌԻԿ-ի շատ խորհրդանշական՝ «Երազանքների սրահում» էր, ինչն էլ ավելի ոճային ու ժամանակակից փայլ էր հաղորդել արարողությանը:

Այստեղ, հենց այս սրահում նոր ընդունված վախժորած երիտասարդները մինչ ուշ երեկո ջանացել, տքնել ու բանավիճել են, ոգեշնչվել, երբեմն էլ հուսահատվել են, երազել ու ծրագրեր են հղացել: Եւ հիմա եկել է պահը երախտիքի խոսք հղելու հարազատ բուհին, ծնողներին, դասախոսներին, որոնք օգնեցին, որ պատվով հաղթահարեն բոլոր մարտահրավերները: «ԱՌԻԿ-ի դասախոսական կազմ, գիտեմ, որ խոսում եմ բոլորի անունից, երբ ասում եմ շնորհակալություն ձեր համբերատարության, աջակցության եւ մշտական ուղղորդման համար, բայց ամենակարեւորը, շնորհակալություն մեզ ստիպելու եւ օգնելու համար, որ մենք համապատասխանեք ամենաբարձր չափորոշիչներին»-հրաժեշտից առաջ ասաց մագիստրոս Անի Սարիբեկյանը:

ՀԱԱՀ-ի ռեկտոր Վարդան ՈՒՌՈՒՅԱՆը, որը նախկինում ղեկավարել է ԱՌԻԿ-ը, երիտասարդներին պատգամեց, որ հիշեն. «Այս գերազանց կրթական հաստատությունը

արդյունք է Ագրարային համալսարանի, ԱՄՆ ՄԶԳ-ի, Տեխասի A&M համալսարանի փայլուն համագործակցության» եւ հորդորեց շնորհակալությամբ միշտ հիշել, որ բացառիկ, բարձրակարգ ուսումնառության հնարավորությունը ստեղծվել է հենց այդ՝ գործընկերային փոխըմբռնման եւ աջակցության շնորհիվ:

ԱՌԻԿ գաղափարի հղացող-ոգեշնչող-իրագործմանը մշտապես աջակցողներից մեկը՝ դոկտոր Զոն Նիքոլըզը ԱՄՆ-ից, ուղիղ կապով ողջունեց ու քաջալերեց երիտասարդներին:

Բակալավրիական եւ մագիստրոսական ծրագրերի շրջանավարտներին բարեմաղթանքի ջերմ խոսքեր հղեցին նաեւ ԱՄՆ ՄԶԳ հայաստանյան ծրագրերի տնօրեն Դեբորա Գրիգերը եւ ԱՌԻԿ-ի տնօրեն Արթուր Գրիգորյանը: Ի դեպ, վերջինը նույնպես ԱՌԻԿ-ի շրջանավարտ է եւ իր փորձով գիտե, համոզված է, որ ավարտելուց հետո էլ երիտասարդները մնալու են ԱՌԻԿ-ի մեծ, հարաճուն ընտանիքի անդամներ: Ընտանիք, որտեղ իշխում է սերը մեկմեկու եւ աշխատանքի, գիտելիքի նկատմամբ: Որտեղ յուրաքանչյուրը կարող է ակնկալել աջակցություն եւ բոլորը կարող են սատարել իրար: Որտեղ խրախուսվում են ստեղծագործ միտքն ու երեւակայությունը, եւ սովորում են չընկրկել, չվախենալ դժվարություններից, մարտահրավերներից:

Կրկնելով տիկին Դեբորա Գրիգերին մենք էլ համոզված փաստենք, այս երիտասարդներին փայլուն ապագա է սպասվում:

ԿԱՐԴԱՆ ՌԻՌՈՒՑՅԱՆ. «ԿԱՐԵՒՈՐ ՔԱՅԼ՝
ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱՒՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԳԻՏԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՐԱՒՈՒՍԵԼՈՒ չԱՄԱՐ»



Հուլիսի 2-ին կայացած Նիստում ՀԱԱՀ որակի գնահատման եւ ապահովման կենտրոնի տնօրեն, հասարակական գիտությունների ամբիոնի դասախոս Մարիամ Մովսիսյանը ներկայացրեց իր հեղինակած «ՀԱԱՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտական գործունեությունը խրախուսող լրավճարների հաշվարկման եւ վճարման» կարգի նախագիծը: Ըստ այդմ, օգոստոս ամսից կդադարեցվի գիտական աստիճան եւ կոչում ունեցողների լրավճարների փոխանցումը: Որպեսզի, գիտության մարդիկ «չքնեն դավիժները վրա» եւ ավելի հետեւողականորեն զբաղվեն գիտական գործունեությամբ, կսահմանվի նոր սկզբունք: Տարեկան երկու անգամ՝ հուլիսին եւ դեկտեմբերին գիտական մաս կներկայացվեն ԲՐԿ-ի կողմից ճանաչված, web of science, scopus շտեմարաններում ընդգրկված գիտական հրատարակություններում, արտասահմանյան բուհերի (որը թվարկումը եւ վճարման չափի սանդղակը կա նախագծում) գիտական հանդեսներում տպագրված աշխատանքների

մասին տեղեկատվություն եւ լրավճար կստանան արդյունքի համապատասխան:

Անշուշտ, սա գիտական գործունեությունը քաջալերելու-խթանելու-խրախուսելու շատ լավ ճանապարհ է: Ընդամեն, քննարկման ժամանակ առաջարկություն եղավ, որ լրավճարներ նախատեսվեն նաեւ ասպիրանտների ու հայացրդների համար:

Նախագիծը վերջնական քննարկման եւ հաստատման կներկայացվի հուլիսի 4-ին, գիտխորհրդի Նիստում:

Ավարտվում է ուսումնական տարին, հետեւաբար ֆակուլտետների դեկանները, հեռակա ուսուցման դեպարտամենտի պետը եւ քոլեջի տնօրենը ներկայացրին քննաշրջանի արդյունքներն ու պատկերը: Ընթացիկ հարցերը բազմազան էին: Առավել հետաքրքիր ու կարեւոր խնդիրներին կանդիդատաննք առանձին:

ԼՍԱՐԱՆՈՒՄ



-Ուզում եմ գաք եւ տեսնեք-համոզվեք վիճակը որքան է փոխվել: Արմատապես: Բոլոր լսարանները զբաղված են: Ուսանողները գործ են անում, օգնում են իրար, խնդիրներ են լուծում: Դասախոսներն էլ անդադար մեր կողքին կանգնած են: Եւ բոլորովին տարբերություն չեն դնում՝ տվյալ ուսանողին իրենք դասավանդում են, թե ոչ: Եթե հարցեր կան ուրեմն սպառիչ պատասխանում են, բացատրում:

Իսկապես, օրվա վերջն էր, ամռան տապը չթուլացող ու բորբ, իսկ լսարաններում «սովորելու աշխուժություն» էր տիրում: Համակարգչային գրաֆիկայի բոլոր լսարանները զբաղված էին: Բայց շատ հաճելի է, որ ավանդական՝ ձեռքով, վատմանով, քանոնով աշխատելու հմտություններն էլ են կարեւորվում: ճարտարագիտական միտքը զգրն եւ ստեղծագործ պահելու կարեւոր պայման է լավ սրված մատիտը...

ԵՐԲ ՃԱՃՈՒՑՔՈՎ ԵՍ
ՍՈՎՈՐՈՒՄ

-Որ խնդրեմ, մեկ րոպեով կբարձրանա՞ք զծագրության ամբիոն, -Այա Ավագյանն է, տեխնոլոգիական ֆակուլտետի առաջին կուրսի ուսանողուհի: Ուսման նկատմամբ միանգամայն խելացի, խոհեմ ու նպատակալաց վարքով պարմանուհի: Նրան դասավանդելու հնարավորություն եմ ունեցել առաջին կիսամյակում:

-Սիրով, կգամ, -բայց փորձում եմ ճշտել, թե, այնուամենայնիվ, ինչ նպատակով ենք բարձրանում հինգերորդ հարկ:

-Երեւի գիտեք, զծագրությունը միշտ էլ ուսանողների ամենախոցելի կրմերից մեկն է եղել:

Իհարկեգիտեմ,անշուշտ՝գիտեմ:Հիմնականպատճառը՝ դպրոցից այս առակայից տարրական հմտություններ չսերմանված են գալիս: Ավելի ճիշտ՝ մանգամայն բորբիկ: Իսկ ճարտարագիտական եւ տեխնոլոգիական կրթություն ստանալու, ապագա մասնագիտության մեջ կայանալու համար անկյունաքար է զծագրությունը: Խզում էր առաջանում, որը շատերը պատվով հաղթահարել չէին կարողանում...

-Չեն թողնում մեկ րոպե շունչ քաշենք, -գոհունակությամբ ժպտում է դասախոսը, -կիավատա՞ք ամբողջ օրը նույնիսկ մի գավաթ սուրճ խմելու ժամանակ չի եղել: Ավարտվող ուսումնական տարվա բազում փոփոխություններից մեկն էլ Նյութերի դիմադրության եւ զծագրության ամբիոնների միացումն էր: Ակնհայտ է, որ նոր ամբիոնի վարիչը՝ տ.գ.դ. Սմբատ Դավեյանը, կարողացել է մեկ գաղափարի շուրջ համախմբել բոլորին՝ սովորելու համար այս դժվար առարկաները պետք է անդադար աշխատանքով հաղթահարեն ուսանողները: Դասախոսների հետ համատեղ՝ անդադար աշխատանքով:

Եա մի կարեւոր հանգամանք. ներկայացվող ամբիոնը այն քիչ դեպքերից է, երբ միանալուց հետո բաղադրիչները չեն շարունակում զատված, բաժանված, անհաշտ գործել: Իսկ այդպիսի՝ «միավորված», բայց մեկ շղարձած ամբիոններ, ցավոք դեռ կան: Նրանք շարունակում են օտար ու օտարված մնալ...

Հ.Գ. Այս պատմության մեջ ամենակարեւորը, թերեւս, բարդույթը կտորելն է, երբ ուսանողները շատ լավ հասկանում եւ համոզվում են, եթե ջանաս կիսանեն գոհացնող արդյունքի...

ԿՍՄԻԹ

«ՈՐԱԿԻ ՇԵՄԸ» ԱՆՀՐԱԺԵՇ
Է ՊԱՆԵԼ ՌԻ ՊԱՆՊԱՆԵԼ, ՃԻՇՏ
ԵՐԿՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՊԵՍ

Ռեկտորատի վերջին Նիստում ուսումնական հարցերով պրոռեկտոր Ռոբերտ Մակարյանը մտահոգություն հայտնեց, որ մեր բուհի Աստու Քոչինյանի անվան քոլեջի սաների իմացության ընդհանուր մակարդակը ցածր է ցանկալի-պահանջվածից: Հակառակ դրան, բախվում ենք «ուռճացված» գնահատականների խնդրի հետ: Պատճառն ավելի քան պարզ է... բարձր առաջադիմությամբ շրջանավարտները ՀԱԱՀ դիմելու իրավունք են ստանում: Որպես արդյունք, այս տարի շատ են գնահատականների բողոքարկումները: Ի դեպ, ուռճացումների հակառակ, արժանավորներին միտումնավոր ցածր նշանակելու դեպքեր էլ կան, որը շատ ավելի վատ, պարսավելի, նույնիսկ՝ հանցավոր վարքագիծ է...

Պրոռեկտոր Մակարյանը նշեց, որ այս առումով «աչքի ընկած» դասախոսների եւ համապատասխան ամբիոնների վարիչների հետ խնդիրն արդեն քննարկել են: Ովքեր չեն գիտակցի ուսուցչի արժանապատիվ վարքագծի դերը, նրանց հետ կխզվի աշխատանքային պայմանագիրը:

Ռեկտոր Վարդան Ուռուտյանն այս հարցը ամփոփեց մեկ, հստակ պահանջով. «Որակի շեմը անհրաժեշտ է պահել»:

Սա խնդիր է, որ կկարգավորվի: Կարեւորն այն է, որ քոլեջի նկատմամբ հետաքրքրվածությունը հետզհետե ավելի ու ավելի է մեծանում եւ վերածվում է ցանկալի ուսումնական հաստատության:



ՇՆՈՐՀԱՆԴԵՍ ԲՈԼՈՐՈՎԻՆ ՆՄԱՆ ԶԷՐ
ՇՆՈՐՀԱՆԴԵՍԻ

Այն ակնհայտորեն ավելին էր, քան ընդամենը արտասահմանյան գործուղումից տպավորություններ պատմելու հավաք...

Հունիսի 24-ին ՀԱԱՀ որակի գնահատման եւ ապահովման կենտրոնի տնօրեն, հասարակական գիտությունների ամբիոնի դասախոս Մարիամ Մովսիսյանը ներկայացրեց դասավանդման իր փորձը Կրակովի Յագելովյան համալսարանում: Այն հնարավոր է եղել ԵՄ «Էրազմուս+» միջազգային կրեդիտային շարժունություն ծրագրի շրջանակում:

Յագելովյան համալսարանը հիմնադրվել է 1364-ին, եւ Պարիայի համանման կրթական հաստատությունից հետո ամենահինն է Կենտրոնական Եվրոպայում: 117 կրթական ծրագրերից 34-ը միջազգային են: 500-ից ավելի օտարալեզու դասընթացներ կան, ընդ սմին, անգլերենից բացի նաեւ՝ գերմաներեն, պորտուգալերեն, իսպաներեն, ուկրաիներեն:

Մեր գործընկերը համաշխարհային եւ զարգացման հետազոտություններ կրթական ծրագրի ուսանողների հետ հնարավորություն է ունեցել քննարկելու բարձրագույն կրթության ոլորտում տեղի ունեցող համաշխարհայինացման եւ միջազգայնացման գործընթացները, դիտարկելով որոշ երկրների օրինակները՝ նրանք համեմատական վերլուծություն են կատարել:

Այս փոքրիկ ճանաչողական տեղեկատվությոնից հետո, բանախոսը Նյութը սկսեց մատուցել ինտերակտիվ եղանակով՝ քննարկելու-բանավիճելու-մեկմեկու լսելու շատ կարեւոր մեթոդով: Ի՞նչ է ակադեմիական ազատությունը, եւ մենք պատրա՞ստ ենք արդյոք դրան: Ազատությունը բաղձալի է, իսկ դրան համապատասխան չափաքանակով պատասխանատվության պատրա՞ստ ենք, թե ոչ: Որո՞նք պետք է լինեն համակարգի վերահսկողական գործառույթները: Նման բազում հարցեր, որոնք դիտարկվեցին մեծ հետաքրքրությամբ, համակողմանիորեն:

Ինչպես միանգամայն ճիշտ նկատեց Մարիամ Մովսիսյանը, ուսանողն այսօր շատ է փոխվել, եւ գիտության հետ կապված իրեն հետաքրքրող շատ հարցերի պատասխաններ կարող է ակնթարթորեն գտնել SS գորեղ ուղիներով: Սա նշանակում է, որ դասախոսը անդադար պետք է աշխատի, ջանք թափի ինքնակրթության-ինքնազարգացման ուղղությամբ: Գումարած՝նաեւ մանկավարժի, հոգեբանի կարողությունները: Մենք պետք է ուսանողին սովորեցնենք սովորել: Պետք է կարողանանք նպատակին հասնելու ճանապարհը ցույց տալ: Եւ վերջում պետք է ամենաարդարացի ու անաչառ գնահատականով ամփոփենք համատեղ աշխատանքը:



«ԱՇԽԱՐՀՍ ՄԵ ՓԱՆՋԱՐԱ (ՊԱՏՈՒՀԱՆ) Է»

Միանգամայն դիպուկ բնութագրել է Սայաթ Նովան: Եւ աշխարհի հետ համաքայլ լինելու համար պատուհանդ ու սիրտդ բաց պետք է պահես: Պետք է կարողանաս ճանաչել եւ ճանաչելի լինել... Եւ, ամենակարեւորը, պետք է հստակեցնես երկրիդ ու ժողովրդիդ տեղն ու դերը այդ ընդգրկուն համատեքստում:

Վերջին շրջանում ՀԱԱՀ-ում շեշտակիորեն ավելացել են միջազգային համագործակցության հասցեները: Անգլերինն տիրապետող մեր՝ հիմնականում երիտասարդ, գործընկերները մեկնում են գործուղումների եւ արդեն ձեւավորված բարի ավանդույթի համաձայն ներկայացնում են արդյունքները:

Հունիսի 20-ին տնտեսագիտական ֆակուլտետի ագրարային քաղաքականություն եւ խորհրդատվություն ամբիոնի երեք աշխատակից ներկայացրեցին գործուղումների արդյունքները: Այսպես. Տ.գ.թ. Գոհար Ոսկանյանը «Էրազմուս +» ծրագրի շրջանակներում Լեհաստանի Քվիձին քաղաքի Պալիսլանսկի քոլեջում մասնակցել է «Միջազգային շաբաթ» նախաձեռնությանը: Տ.գ.թ Իռա Փանոսյանը ՀԱԱՀ-ի եւ ԱՌԿ-ի մի խումբ աշխատակիցների հետ վերապատրաստում է անցել Իտալիայի Տուշայի համալսարանում: Սարգիս Հարությունյանը շատ հետաքրքիր դիտարկումներ է արել Սլովակիայում, Նիտրայի ագրարային համալսարանում:

Մեր երիտասարդ գործընկերները անչափ աշխույժ, թարմ շնչով ներկայացրին հյուրընկալող բուհերը, համադրեցին մեր կրթական իրականության հետ: Հստակեցրին լավ ու թերի կողմերը եւ առաջարկություններ, որոնց իրականացումից կշահենք բոլորս:

Լսում էի նրանց եւ մտածում. ինչ հրաշալի է, որ արժանավոր, երիտասարդ մասնագետներն են ներկայացնում մեր երկիրն ու բուհը...Կեցցեն

ԵՒ ՄԵՐ ԵՐԿԻՐԸ ԵԶԱԿԻ Է ԱՅՐ ԻՄԱՍՏՈՎ



Ազրաբայինում, բնականաբար, Կենսաբազմազանության միջազգային օրը պետք է նշվեր ըստ պատշաճի, եւ նախաձեռնության հեղինակները բուսի հիմնարար՝ ազրոնոմիական ֆակուլտետի ուսանողներն էին: Բնախապանության փոխնախարար Այսեր Ղազարյանը, ՀԱԱՀ ռեկտոր Վարդան Ուռուտյանը, բնապահպան Կարինե Դանիելյանը, «Շրջակա միջավայրի կայունության աջակցման կենտրոն» ՀԿ-ից Տիգրան Սկրտչյանը, ազրոնոմիական ֆակուլտետի ղեկան Արմենակ Տեր-Գրիգորյանը բարձր գնահատեցին ուսանողների՝ բնապահպանական խնդիրները խորապես կարեւորելու, լուծման ուղիներ որոնել-գտնելու ջանքերը: «Ինձ ուրախացնում է այն փաստը, որ մեր ուսանողները ոչ միայն լավ են ընկալում մարդու եւ բնության միջեւ առկա կարեւորագույն առնչությունները, այլեւ բավականին ներկայանալի խորհրդաժողովի միջոցով կարողանում են կենսաբազմազանության պահպանման կարևորության մասին ուղերձը հղել

տարբեր շահակիցների և լայն հանրությանը»,- նշեց ռեկտոր Ուռուտյանը: Նա հավաստիացրեց, որ համալսարանի ղեկավարությունը միշտ ուսանողների կողքին է լինելու անսպասելի մտահղացումները կյանքի կոչելիս, ծրագրեր, նախագծեր իրականացնելիս:

Քննարկվող թեմաները հրատապ էին, երկրի համար կենսական, անգամ՝ ռազմավարական նշանակություն ունեցող: Ոլորտի մասնագետները գեկուցումներ ներկայացրին Սեւանի կենսաբազմազանության ներկա վիճակի, մեր երկրի բնապահպանական իրավիճակի վրա հանքարդյունաբերության ազդեցության, կենսաբազմազանության պահպանության ժամանակակից մեթոդների մասին: Անշուշտ ուշադրության ծիրում էին նաեւ անտառային ծածկույթի պահպանման ու ընդլայնման՝ ողջ աշխարհում այսօր ցավալիորեն վատթարացող հիմնախնդիրները, որոնց լուծման հարցում մեծ դեր ունեն մեկիորացիան եւ բիոինժեներիան: Հավանաբար քչերն են տեղյակ, որ

2019-ը հայտարարված է կովկասյան ընձառյուծի տարի: ՀՀ-ում հաշվառված է 7-8 ընձառյուծ, որոնց անվտանգ կենսոնակությունը միջազգային հնչեղություն ունի:

Զեկուցումները լավեցին մեծ ուշադրությամբ, իսկ վերջում շահագրգիռ քննարկում եղավ: Ի դեպ, ՀՀ բացառիկ կենսաբազմազանության մասին մի գեղեցիկ պատմություն ներկայացրեց տիկին Դանիելյանը: Երբ օտար մասնագետները ցնցվում, ապշում են մեր այս հարստությամբ (գիտության տեսակետից միանգամայն հասկանալի է՝ երկրաբանական, կլիմայական գոտիականության բացառիկ խաշմերուկ է Հայաստանը), հայ բնապահպանը արձագանքում է. «Ի՞նչ կա զարմանալու, չէ որ Նոյը այստեղ է ափ իջել...»:

Հոգատար լինենք մեր Աստվածաճշ երկրի ու հարստությունների նկատմամբ:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒՄ ԵՆՔ

ԴԱՐՁՅԱՆ՝ ՆԱՅԱՅՔ ՏՈՒՇԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՑ



Օրեր առաջ մենք առիթ ունեցանք ներկայացնելու Տուշայի համալսարանը տնտեսագիտության թեկնածու Իռա Փանոսյանի դիտարկումներով: Այսօր, հունիսի 25-ին, իր տպավորություններն ու «զուգակշիռն» էր ներկայացնում տեխնիկական գիտությունների թեկնածու, որոցնետ Արմինե Պետրոսյանը, որը ՀԱԱՀ-ում դասավանդում է սննդի արտադրության գործընթաց եւ սարքավորումներ առարկան: Նա գործուղման ընթացքում մանրակրկիտ ուսումնասիրել է սննդի եւ գինու տեխնոլոգիա մասնագիտության ուսումնական պլանները, առարկայական ծրագրերը, կրթության կազմակերպման ողջ գործընթացը՝ դասացուցակներից սկսյալ մինչեւ դասախոսություններ, լաբորատոր-գործնական պարապմունքներ:

Տիկին Պետրոսյանը սլայդների ցուցադրմամբ պատմեց, թե ինչպես են իրականացվում լաբորատոր փորձաքննությունները: Բացառապես համակարգիչների միջոցով: Եւ կայացած, եւ, առավել եւս՝ ապագա մասնագետները, ինքնուրույն հաշվարկներ անելու, «տիտրելու», սպեկտրալ անալիզի, վերլուծելու կարիք ամենեւին չունեն: Չի բացառվում, որ այլեւս այդ հմտություններն էլ չունեն: Մեքենան այս հատվածում լիովին փոխարինել է մարդուն:

-Գուցե ճիշտ ճանապարհը սա է,-ասում է բանախոսը,- այս արագ, հարափոփոխ դարում դժվար է պահանջել, որ մասնագետը ողջ խորությամբ եւ ընդգրկումով տեղյալ լինի ոլորտի եւ ճարտարագիտական, եւ տեխնոլոգիական նրբերանգներին: Ամեն դեպքում հստակ է մի բան. նրանք ունեն հիասքանչ գիտիներ, որոնք մրցումակ են համաշխարհային շուկայում: Գիտիներ, որ պատրաստվում են այս մասնագետների ջանքերով:

Սկիզբ առավ մի բանավեճ, որն ուղեկցում է բոլորիս վերջին տարիներին: Ի վերջո, առաջնորդվելով աշխարհում ընդունված սկզբունքներով պետք է թեթեւացնել տեսական գիտելիքի, ձեռքով գծելու, փորձերը դնելու «բեռը», թե շարունակենք՝ հիմնարար գիտելիքներ փոխանցել ու պահանջել ուսանողից: Քննարկումն ըստ էության էր, արտացավությամբ:

Իսկապես բոլորն էլ տեսնում ու հասկանում են, որ փոփոխություններն անխուսափելի են, բայց որքան լավ կլինի, եթե գտնենք ուժեղ միջինը՝ տեսականի ու գործնականի փոխլրացնող եւ մասնագետին «անպարտելի» դարձնող չափաքանակը: Եւ սա պետք է անենք համատեղ, միասին, ըմբռնումով...

CV-ին, ԻՄԱ՝ «ԿՅԱՆՔԻ ՈՒՂԻՆ», ՄԱՐԿԵՏԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾԻՔ Է



Կարելոյ, Էական դեր կատարող գործիք: Եւ որպեսզի աշխատաշուկայում, ուրեմն Նաեւ արեւի տակ, կարողանաս Նպատակիդ հասնել, տեղդ գտնել, պետք է գրագետ կազմես ինքնակենսագրականո՝ CV-իդ: Հատկապես երիտասարդների համար շատ կարեւոր այս հմտությունները սերմանելու Նպատակով ՀԱԱՀ աշխատակազմի ղեկավար Լուսինե Մնացականյանը եւ կարիերայի զարգացման ու շարունակական կրթության բաժնի վարիչ Լիանա Վարդանյանը գործնական պարապմունք կազմակերպեցին:

Տիկին Մնացականյանը մանրակրկիտ ներկայացրեց պահանջները՝ CV գրելիս, տվյալները հստակ եւ անխալ մատուցելու, տեքստը ձեւավորելու, տառատեսակները խնամքով ընտրելու, տպելու նրբությունները: Թվում է, թե մանրուքներ են, սակայն, երբեմն դրանք ճակատագրական դեր կարող են խաղալ: «Ի՞նչ չի կարելի անել CV գրելիս» հարցին պատասխանելիս տիկին Մնացականյանը

իրական օրինականեր դիտարկեց: Հայտնի բան է, խելացի մարդիկ դասեր են քաղում այլոց սխալներից: Համոզված ենք, բերված «դիդակտիկ նյութերը» այլեւս անմոռանալի կլինեն մասնակիցների համար: Օրինակ՝ ասվեց, որ լուսանկար գետեղելը ամենեւին պարտադիր չէ: Սակայն, եթե այնուամենայնիվ, կամենում ենք դնել, ուրեմն պետք է խելամիտ լինենք այնչափ, որ բացառենք բանակի քեֆից, հարսանեկան սրահից, տատիկի 100-ամյակի խնջույքից, բրեւդային խանութների հանդերձարաններից սեֆիները: Կարծում եք սարկա՞զմ է: Երանի չէր սարկազմ լիներ...

Վերջում ներկաները կազմեցին իրենց ինքնակենսագրականները: Ցավալի էր միայն, որ երիտասարդների համար այս շատ կարեւոր նախաձեռնությանը արձագանքել էր ընդամենը 6-7 ուսանող... Ափսոս...

ԼՍԱՐԱՆԱՅԻՆ

ԵՐԲ ԱՌՕՐՅԱԿԱՆԸ ՎԵՐ Է ԱՄՎՈՒՄ ՏՈՒՏԻ



Մաղեր, խառնիչներ, մանրացում, հյութի քամում, ֆիլտրում... համաձայնեք, առօրյական-աշխատանքային-մասնագիտական այս թեմաներն ու եզրույթները կատարելապես զուրկ են ռոմանտիկ-երազկոտ բնույթից: Սակայն խիստ կարեւոր իրականություն են սննդի տեխնոլոգների համար: Տեխնիկական գիտությունների թեկնածու, որոցնետ Արմինե Պետրոսյանը սննդի արտադրության գործընթաց եւ սարքավորումներ առարկան դասավանդում է տարա-փաթեթավորում մասնագիտության երրորդ կուրսին: Ի տարբերություն մյուս մասնագիտացումների, երբ կաթի տեխնոլոգը պետք է լավ ծանոթ լինի կաթնամթերքի վերամշակման սարքավորումների, մսի տեխնոլոգը՝ մամլթերքի արտադրության նրբերանգների հետ... տարա եւ փաթեթավորում մասնագիտացման ուսանողները պետք է պատկերացում ունենան բոլոր

դրուտների սարքավորումների մասին: Հեշտ գործ չէ: Իսկ փաթեթավորողները դիզայներներ են ավելի ստեղծագործ, Էությամբ արվեստին ավելի մոտ: Ուստի դասախոսը որոշեց «չոր ու ցամաք» թեմաներով ինքնուրույն աշխատանքները ավելի հետաքրքիր մատուցել: Ոգետությամբ լծվեցին գործի... Դասախոսի ղեկավարությամբ ուսանողները լավ էին պատրաստվել: ցուցադրական նյութեր, անիմացիաներ: Անգամ հազուկապը սովորականից ավելի ներկայանալի էր, ավելի հանդիսավոր ու տոնական: Հուզմունքն էլ դժվարանում էին սքողել: Բնական է: Կողքից նայողի համար Նույնիսկ հաճելի՝ կարոտախտ արթնացնող: Օրինակ՝ ես հիշեցի ուսանողական տարիներես հույզերն ու տազնապները: Ինքնուրույն աշխատանքների այս շատ կարեւոր ամփոփմանը ներկա էին տեխնոլոգիական ֆակուլտետի



ԴԱՐՁԱՆ ԿՈՐՈՒՏ, ԴԱՐՁԱՆ ԱՆԱՄՔ ՎԻՇ

Մեծ ու փոքրի, մերձավոր ու հեռավորի համար Նա եղավ ու կմնա Մացակիչ։ Որքան գորովանք, սեր, պատկառանք էին դնում աշակերտները-սաները այդ մեկ հատիկ բառի, դիմելաձեւի մեջ՝ Մացակիչ...

Լոռեցի էր... Ժողովրդական բառ ու բանով, բարբառի խոր իմացությամբ, հումորով, համ ու հոտով, շիտակ, պարզ, առանց կեղծավորության։ Եւ ինչ կարիք ուներ կեղծելու...

Մտավորական էր, ազնվականի բնատուր կեցվածքով, էությամբ, վարքով։ Նրբակիրթ, նրբակատ, կնամեծար։ Կանանց հաճոյախոսելու, բարի խոսք ասելու, երիտասարդների ջաջալերելու, ճիշտ ուղին հուշելու-մատնացույց անելու անուրանալի կարողությամբ։ Քչերին տրված կարողությամբ... Արվեստների մեծ գիտակ էր,

Անսահմանորեն Նվիրված էր մասնագիտությանը՝ գիտությանը, կրթության գործին։ Ամբողջ հոգով ոգեւորվում էր Նվաճումներով, կոտորվում, մի բուռ էր դառնում ձայնողւմների դեպքում։ Ագրարայինի ամրակուռ, փառահեղ փաղանգը Նոսրանում է։ Մեր պահապան հրեշտակների գունդը առաջին անգամ մեզ հուսախաբ է անում...



ԱԳՐԱՐԱՅԻՆԻ ԱՄԵՆԱՎԱՌ ԳՈՒՅՆԵՐԻՑ ՄԵԿԸ ՊԱԿԱՍԵՅ ԱՇԽԱՐՀԻՑ...

Շենչող էր՝ Ներս ու դրսից։ Հարուստ ներքնաշխարհով, հյութեղ, վառ, համարձակ։ Ինքն իրեն ստեղծած մարդ էր։ Եւ այդ արարումի հիմքում սերն էր ընթերցանության Նկատմամբ։ Կարդում էր անհագ, անդադար, միշտ։ Նա տեսավ երկրային կյանքի բոլոր անտանելի կորուստները։ Վիշտը կրեց վեհորեն, լուռ, կողքից Նայողի համար անտեսանելի, Նույնիսկ անհասկանալի, անձայն։ Միայն Ինքն ու Աստված գիտեին, թե ինչ է կատարվում հոգու Ներսում, իսկ դրսից տիկին Սիլվան էր՝ առինքնող, հմայիչ, ասող-խոսող, հումորով, բոլորին օգնության հասնող։ Գրադարանային գործի հրաշալի գիտակ էր, Նվիրյալ, հմուտ կազմակերպիչ։ Խստապահանջ էր առաջին հերթին Ինքն իր, ապա մյուսների Նկատմամբ։ Հե՞շտ եք կարծում գիտական գրադարանի՝ միայն կանանցից կազմված աշխատակազմը

«Բա սա ընկերություն է», -Նեղսրտում էի ես։ Իսկ հաջորդ պահին ինքս էլ պատասխանում էի. «Նրա համար գրքից ու աշխատանքից վեր ոչինչ չկա աշխարհում»։ Կյանքի 81-րդ տարում մենք հրաժեշտ ենք տալիս տառապանքների ուղիով ուղիղ թայլած լուսավոր մարդուն... Սիլվա Ջաքարյանին...

-Տիկին, այս երեխան ոչ Չեր Թալինի, ոչ էլ Արագածի մարդ է, թողեք, որ մեր գործընկերը դառնա...

Հիշողություններս բազում են, բարի ու լավ։ Դրանք վեհացնում են հիշատակն այն մարդու, որի հոգին սրբագործված է լույսով։ Լույս, որն առաջնորդում է ծատերին, այդ թվում Նաեւ ինձ՝ իր հետնորդի, որի մասնագիտության կրողն ու տերն են ես, գիտություն, որի խոնարի ծառան եմ...

Քանի դեռ կա այն բանակը, որի գինվորն ենք Նաեւ մենք, որոնք անցել են հարությունյանական դպրոցը, Նա միշտ սիրով ու երախտագիտությամբ կիիշվի։

-Աղջի, էս դու ես գրե՞լ,-սիրում էր «աղջի»բառը։ Ասացի. «Այո, ինչո՞ւ եք հարցնում»։

-Հատ սիրուն է։

Նառա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀԱԱՀ 2001-ի շրջանավարտ
ՀՊՄՀ 2015-ի բանափրկության մագիստրոս

ԷՐՈՒԱՐԴ ԿՈՍԵՄՅԱՆԻ ՏԻԵՋԵՐԱԿԱՆ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ



Ով կմտածեր... սակավախոս, գրեթե անժպիտ, քայլելիս հայացքը գետնից վեր չբարձրացնող մարդը կունենա այդպիսի դիտողականություն, աշխարհն ու տիեզերքը չափել-զգալ-պարուրել-ապրելու բնատուր շնորհ-կարողություն։ Մտերիմներն ասում են Նաեւ հումորի Նուրբ զգացում ունի, ինտելեկտուալ հումորի։ Սակայն, ափսոս ամենքին Ներս չի թողնում իր ամրոցը։ Իսկ գուցե բարին դա է...

Կոսեմյան հրաշալի գերդաստանի հայրը՝ Սուրենը, շուրջ 3000 գյուտի հեղինակ էր, գնահատված ճարտարագետ։ Նրա շատավիղներից յոթը գիտական աստիճաններ եւ կոչումներ ունեն։ Ալեքսանդրը 2008-ից Կոմիտասի անվան լարային քառյակում է։ Ռոմիկը երկար տարիներ ղեկավարել է քաղաքային տնտեսության կարեւորագույն ոլորտներից մեկը, եղել է Երեւանի գեղագիտական դեմքը կերտողներից։ Էդուարդ Կոսեմյանը ամենասահմռկեցնող գիտության՝ Նյութերի դիմադրության կամ, որ ավելի ահարկու է հնչում՝ սապրամատի մասնագետ է։ Նրա որդին մեր երիտասարդ ու սիրված գործընկերներից է։ Այս ամենը տեսանելի եւ հայտնի էր շատերին։ Սակայն... Ամռան երկնքում բոլորիս համար անսպասելիորեն ճայթած ամպրոպի (իսկ ամռան ամպրոպը, ինչպես գիտեք, թարմ շունչ է բերում) ազդեցություն ունեցավ

ՄԵՐ ՕԺՏԿԱԾ ԵՐԵՄԱՆԵՐԸ



ԵՐԲ ԱՌԱՆՑ ՊԱՐԻ ԱՊՐԵԼՆ ԱՆՆԱՐ Է

Հայոց եւ օտար լեզուների ամբիոնի աշխատակցուհի Արմինե Մկրտումյանի դուստրը՝ տասնամյա Անի Խառատյանը հինգ տարուց ավելի է հաճախում Է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի մշակույթի

կենտրոնի սպորտային պարերի (պարուսույց՝ Անժելա Փափազյան) պարապմունքներին եւ արդեն շրշափելի հաջողությունների է հասել։ Մասնակցել է համահայկական, միջազգային մրցույթների, բոլորովին վերջերս, առաջին անգամ՝ Նաեւ աշխարհի առաջնության, որը տեղի ունեցավ ՀՀ-ում։ Հայաստան էին եկել 35 երկրից Ներկայացուցիչներ։

-Աշխարհի առաջնությունում 5 պար պետք է Ներկայացնեին,-պատմում է Արմինեն,-հինգերորդը ուսուցչի եւ զույգի՝ Սամվել Ասատրյանի հետ ստեղծել են կայծակնային արագությամբ, ընդամենը 20 օրում։ Այս առաջնությանը մասնակցելը շատ կարեւոր էր։ Երեխաները հնարավորություն ունեցան շփվելու պարային այլ դպրոցների Ներկայացուցիչների հետ։ Իրենց հմտություններն ու տեղը ճշտելու,

զուգահեռներ անցկացնելու բացառիկ պատեհություն էր։ Ամոռանալի փորձառություն։ Հարցնում եմ. «Ինչո՞ւ հատկապես սպորտային պարեր»։

-Ընտրությունը կատարեցինք երեխայի ցանկությամբ։ Հիմա առանց պարի անհնար է պատկերացնել։ Անդադար պարային շարժումներ է անում, պարապում, հղկում է պլաստիկան։

Անին թեեւ տարված է պարով, սակայն լավ է սովորում Նաեւ դպրոցում։ Հայերենից բացի փայլուն գիտե Նաեւ անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն։ Հատ է սիրում գիրք կարդալ։

Ցավոք, ինչպես մարզիկների, այնպես էլ պլաստիկ արվեստներով զբաղվողների բեմական կյանքը շատ կարճատեւ է։ Եւ Անին, արդեն հստակ է որոշել տարիներ անց պարուսույց է դառնալու։

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՏԱՅ ԹԱԳՈՒՆԻՆԵՐԸ



Պատմական փաստերը վկայում են, որ հայ կինը ոչ միայն մեր, այլև այլ երկրների պատմության բախտորոշ ժամանակահատվածներում զգալի դեր է կատարել, որոնց մասին ցավոք բավական քիչ տեղեկություններ են պահպանվել: Ամենայն հավանականությամբ այն պատճառով, որ ընդհանրապես պատմության մեջ, առանձին բացառություններով, կնոջը վերագրվել է երկրորդական դեր: Մեր համեստ հնարավորությունների շրջանակներում, փորձել ենք Երուսաղեմի ծագումով հայ թագուհիների օրինակով, կոտրել կարծրատիպը: Ցանկանում ենք շեշտել նաեւ որ Երուսաղեմի հայ թագուհիների պատմությունը զգալի աղերսներ ունի Կիլիկիայի հայոց թագավորության հետ, քանզի ինչպես իրավացիորեն նկատել է Հռոմի Գրիգորիոս 13-րդ պապը. «Այն ժամանակ, երբ քրիստոնյա իշխաններն ու ռազմիկները գնացել էին վերադարձնելու սուրբ երկիրը, ոչ մի ժողովուրդ նույնքան խանդավառ, հավատով ու ոգետրված չէր գալիս նրանց օգնության, ինչպես հայերը, որոնք օգնում էին խաչակիրներին ձիերով պարենով ու ուղղորդմամբ»:

Ըստ ավանդության Երուսաղեմի առաջին թագուհին եղել է Փոքր Հայքի Աբգար թագավորի կինը՝ Հեղինեն: Նա ամուսնու մահից հետո ուղեւորվում է Երուսաղեն: 42 թ. Երուսաղեմում մղեցնում էր սովը: Հեղինեն վաճառում է իր թանկարժեք զարդերը եւ պարեն գնում: 5 տարի անց՝ 47-ին Երուսաղեմի բնակիչներին հաջողվում է հաղթահարել սովը եւ ամենեին էլ պատահական չէր, որ Հեղինեն բարեգործությունից անցնում է շինարարության:

Հեղինեի ձեռնարկած առաջին քայլը Տիրոջ գերեզմանի պարսպապատումն էր, որի վրա կառուցվում է նաեւ բրգաձեւ փոքր եկեղեցի: Կառուցվում են նաեւ այլ եկեղեցիներ: Կասկածից վեր է որ այդ կերպ հայ թագուհին փորձում էր մարդկանց մեջ ամրապնդել հավատը Աստծո նկատմամբ եւ փրկել նրանց երկրային մեղքերից: Հեղինեի կառուցածներից է Ս. Հակոբ եկեղեցին, ընդ որում, այն տեղում որտեղ թաղված էր նրա գլուխը: Այն, որ Հեղինեն իրոք մեծ հարգանք է վայելել Երուսաղեմում վկայում է թեկուզ այն փաստը, որ մահից հետո Հեղինեին հողին են հանձնել թագուհուն վայել ծեսով:

Երուսաղեմի առաջին թագավորի կինը Մարաշի հայ ազնվական Թաթուլի (Թորոս) դուստր Արդան էր: Ի դեպ նա ամուսնացած էր Երուսաղեմի թագավոր Բալդուին I-ի հետ, որը նախքան թագավոր դառնալը Արդայի հոր առաջարկությամբ «դարձել էր Եդեսիայի (Ուրֆա) առաջին կոմսը»:

Հաջորդ թագուհին, որ հիշատակվում է Երուսաղեմի պատմության մեջ, ծագումով հայ Մորֆիան էր, Մալաթիայի կառավարիչ Գաբրիել (այլ կերպ Խորիլ) իշխանի դուստրը: Վերջինս ամուսնացած էր հայտնի խաչակիր Բալդուին II-ի հետ, որը 1100 թ. դարձել էր Եդեսիայի կոմս: Մեզ հասած տեղեկությունների համաձայն, նրանք ունեին 4 դուստր եւ նախքան 1118 թ. Երուսաղեմի թագավոր հռչակվելը բնակվում էին Եդեսիայում: Որոշ տեղեկությունների համաձայն, Բալդուինն այնքան էր սիրում իր կնոջը, որ հանուն այդ սիրո հետաձգել էր իր թագադրությունը մինչեւ 1119 թ. Սուրբ Ծննդյան տոներն, այն նպատակով, որ իր կինը ուղեկցի իրեն որպես թագուհի:

Հետաքրքիր է, որ Մորֆիան առանձնապես չի խառնվել Երուսաղեմի ներքաղաքական կյանքին, սակայն դա ամենեւին չէր նշանակում, թե նա հարկ եղած դեպքում պատրաստ չէր կայացնելու պատասխանատու որոշումներ: Ասվածի ամենավառ վկայությունը թերեւս այն է, որ երբ 1123-ին ամուսնուն առեւանգում են, Մորֆիան հայ վարձկանների

միջոցով կարողանում է հայտնաբերել գերության վայրը եւ քանակցում է ազատ արձակելու շուրջը: Ի վերջո, 50 հայ զինվորի ջանքերով հաջողվում է ազատել ամուսնուն գերությունից հանգամանք, որը խոսում է Մորֆիայի ոչ միայն անձնական երջանկությունը վերականգնելու ձգտման, այլ պետական բարձր մտածողության մասին:

Առանձին աղբյուրներ վկայում են, որ Մորֆիան զգալի ավանդ ունի նաեւ Երուսաղեմի թագավորությունում մշակույթի զարգացման գործում եւ նրա օրոք թագավորության մշակույթը ներկայանում է որպես արեւելյան եւ արեւմտյան ոճերի յուրօրինակ խառնուրդ: Մորֆիան մահաել է 1126-ի հոկտեմբերի 1-ին եւ արու զավակ չունենալու պատճառով Երուսաղեմի թագավորությունում գահ է բարձրանում նրանց ավագ դուստրը՝ Մելիսինդան, որն ամուսնացած էր Անժուի դուքս Ֆուլկինի հետ: Մելիսինդայի մյուս քույրերը ամուսնացած էին ժամանակի հայտնի դեմքերի հետ: Մելիսինդայի եւ Ֆուլկինի ամուսնության արդյունքում, 1130 թ. ծնվում է նրանց որդին, որը Բալդուինների ապագա ժառանգն էր: Նման պարագայում, մինչեւ որդու չափահաս դառնալը Մելիսինդան հանդես էր գալիս որպես խնամակալ:

Հայրական կողմից Մելիսինդան ծագում էր Ֆրանսիայի Ռետել կոմսությունից: Նրա հայրը՝ Բալդուինը խաչակիր ասպետ էր, գլխավորում էր Եդեսիայի կոմսությունը եւ ամուսնացած էր Մալաթիայի հայազգի իշխան Գաբրիելի դստեր՝ Մորֆիայի հետ: Հետաքրքիր է նկատել, որ Բալդուին II-ի մահից հետո Ֆուլկինն ու Մելիսինդան ժառանգում են գահը որպես հավասարազոր կառավարիչներ: Անդրադառնալով այդ փաստին, ժամանակիցը գրում էր. «Թագավորության դեկը մնաց աստվածահաճո թագուհի Մելիսինդայի իշխանության ներքո, որին դա անցավ ժառանգության իրավունքով»:

Ցավոք քննարկվող ժամանակաշրջանում իրականանում է Բալդուին II-ի այն մտավախությունը, որ փեսան, ունենալով խաչակիր ասպետների լուրջ աջակցությունը, կարող է մարտահրավեր նետել Մելիսինդայի իշխանությանը՝ մեղադրելով նրան անհավատարմության մեջ: Տեղացի ազնվականները համակրում էին Մելիսինդային որպես աստվածախաճո թագուհի: Ինչ վերաբերում է Մելիսինդայի անհավատարմության փաստին, ապա պատմաբանները լիովին բացառում են այդ:

Զբավարարվելով անհիմն մեղադրանքներով, Ֆուլկինն անգամ մահափորձ է իրականացնում թագուհու մտերիմների նկատմամբ: Այդ փաստը բավարար էր Մելիսինդայի համար ամուսնու նկատմամբ համարժեք գործողություններ իրականացնելու համար: Դրանց արդյունքում Ֆուլկինի դիրքերն երկրում զգալիորեն թուլանում են, որից հետո, ըստ մեզ հասած տեղեկությունների, նա այլևս ոչ մի քայլ չէր ձեռնարկում առանց Մելիսինդայի հետ համաձայնեցնելու: Այս փաստը

վկայում է, որ Մելիսինդան որպես Երուսաղեմի թագուհի օժտված էր նաեւ պետության ղեկավարին բնորոշ վճռականությամբ եւ հաստատականությամբ: Շատ չանցած թագավորն ու թագուհին հաշտվում են եւ ծնվում է նրանց 2-րդ որդին՝ Ամարիկը: 1143-ին, որսի ժամանակ Ֆուլկինը դժբախտ պատահարի զոհ է դառնում: Դրանից հետո, Մելիսինդան 10 տարի միայնակ է կառավարում երկիրը և փոխարինում է որդուն՝ գահի օրինական ժառանգորդին, 1153-1161թթ., երբ նա հերթական խաչակրաց արշավանքին էր մասնակցում: Ժամանակակիցները շատ բարձր են գնահատել Մելիսինդայի անձն ու գործը, համարելով նրան բացառիկ տնտեսվարող, իմաստուն՝ թե՛ հոգեւոր, թե՛ աշխարհիկ մարդկանց միջավայրում: Բացի այդ նրանց վկայությամբ Մելիսինդային հաջողվել էր շրջանցել «իր սեռին ա ռ ի ե ս տ ա կ ա ն ո ռ ե ն վ ե ռ ա գ ը ղ ո ղ թերությունները» ու բարձր պատասխանատվությունը «կարեւոր գործերի համար»: Մ ե լ ի ս ի ն դ ա յ


ձեռնարկումներից հիշատակության է արժանի հատկապես Բեթանիայում հիմնած Աբ. Ղազար եկեղեցին, որտեղ Մորֆիայի կրտսեր դուստրը՝ Իովետան, կուսակրոնություն է ընդունել եւ դարձել սկզբում Աննա, ապա՝ սուրբ Ղազար մենաստանի մայրապետ:

Ժամանակի պատմիչները Մելիսինդայի անվան հետ են կապում նաեւ Աստվածածնի գերեզման-տաճարի վերակառուցման պատմությունը: Մելիսինդան մահացել է 1184 թ. եւ թաղվել մոր՝ Մորֆիայի կողքին: Աստվածածնի տաճարում գտնվող նրա գերեզմանը մեր օրերում զգալիորեն վնասվել է, քանի որ ուխտավորները սովորություն ունեին ոսկե մուրճով հարվածել Աստվածածնի տապանին: Տաճարը սրբատեղի է նաեւ մահմեդականների համար, որոնք օրվա մեջ մեկ անգամ գալիս են այստեղ: Ուշագրավ է նաև, Կիլիկիայի հայոց թագավոր Հեթումը այցելելով տաճար՝ հրամայել է կատարել մի շարք շինարարական աշխատանքներ: Բացի այդ, պատրիարք Մարտիրոսը 1420-ին, ինչպես վկայում են պահպանված արձանագրությունները, այցելել է տաճար եւ իր ավանդն ունեցել տաճարի վերակառուցման գործում: Պահպանված վկայությունների համաձայն նա էլ է թաղվել այդ եկեղեցում: Նույն տաճարում են թաղված Երուսաղեմի 3 հայ թագուհիները՝ Արդա, Մորֆիա, Մելիսենդա:

Երուսաղեմի հաջորդ հայ թագուհին, որի մասին տեղեկություններ են պահպանվել Ազնեսն է(1136-1184), որը Կիլիկիայի իշխան Կոստանդին I-ի (1195-1100) դստեր՝ Բեատրիսի թոռնուհին էր: Ազնեսը թագուհի է հռչակվում Երուսաղեմի թագաժառանգի հետ ամուսնանալու արդյունքում: 1157 թվականին, Ազնեսն ամուսնանում է Ամառիկի հետ, որը Բալդուին III-ի եղբայրն էր: Շատ չանցած, նրանց ամուսնությունն անվավեր է ճանաչվում, քանի որ նույն պապի ժառանգներն էին, հանգամանք, որը դեմ էր քրիստոնեական ավանդույթներին: Ազնեսից բաժանվելուց հետո, Ամառիկն ամուսնանում է հայկական արմատներ ունեցող մեկ այլ աղջկա հետ, որը Տարոնի հայկական հնագույն թագավորիների թագաժառանգ Մարիա Տարոնիտիսսայի դուստրն էր: Ամառիկը մահացել է 1174-ին, իսկ Մարիան կարգվել է այրի թագուհի: Հետագայում Մարիան կրկին ամուսնանում է Սալաի Էդ-Դիիի դեմ Երուսաղեմի պաշտանությունը ղեկավարած Բալիանի հետ:

Ամփոփելով կարող ենք նշել, որ Երուսաղեմի ծագումով հայ թագուհիները հավատարիմ իրենց արմատներին զգալի ավանդ են ունեցել Սուրբ քաղաքի թագավորության թե՛ տնտեսական, թե՛ մշակութային, թե՛ քաղաքական կյանքում: Դրանով իսկ բարձր պահելով հայ կնոջ բարի համբավն ու բարձր հեղինակությունը:

Շահան ԲԱԽՇԵՑՅԱՆ
գինու տեխնոլոգիա-2



ՆԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՆԱԽԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

**3-4
2019**

Լրատվական գործունեություն իրականացնող՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարան հիմնադրամ, հասցե՝ Տերյան 74 պետոեզիստրի վկայական՝ 273.210.03231, տրված 10.06.2002 թ.

գրանցված է ՀՀ ԱՆ, վկայական 01Մ000153
Խմբագրության հասցեն՝ ՀԱԱՀ, 1-ին մասնաշենք, 4-րդ հարկ e-mail: a_khudaverdyan@mail.ru

խմբագիր, համարի պատասխանատու եւ ձեւավորող՝
ԱՆԻ ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ